

ձեր այս կողմերը առեւտուրը ընելը զիրենք պիտի տհաճեցնէ, որովհետեւ կարճ ժամանակի նէ, ապրանքները Շիրազ պիտի ստանայ տարեկան, Նոյեմբեր, Դեկտեմբեր, Յունուար, Փետրուար, Մարտ կամ Ապրիլ ամիսներուն մէջ:» (I. O. վաւերաթուղթ O. C. No. 608, անդ էջ 462-3):

Սիր Թովմաս Ռօէ (1615-1619) հաշուով 1 շահին կ'արժէ Անգլիական 4 բէնս ոսկեգրամ կամ Միացեալ Նահանգաց տոլարով 7 $\frac{3}{4}$ սէնթ: Մէկ թումանը հաւասար է երեք Անգլիական ոսկի վեց շիլինգի եւ 8 բէնսի, այսինքն Միաց. Նահանգաց ոսկեգրամ 18 տոլար եւ 8 սէնթի մօտ: Արժէքները նոյն կը մնան Թովմաս Հէրպերգի (1627-1629) եւ Ճան Ֆրայլբի (1677) մօտ:

Անգլիացիները ունէին Պարսկաստան իրենց յատուկ մետաքսի քննիչները: Նոյն վաւերաթուղթին մէջ կը կարդանք իբր 11 յօդուած: «Դուք իբր Ձեր դործակատարներէն մին պէտք է հիւրասիրէք Ճան Լիչլէնտը որ պիտի ծառայէ մետաքսները աչքէ անցնելու եւ քննելու աշխատանքին մէջ, ինք կը հաւաստէ որ այդ դործին մէջ կը թուած է եւ փորձառութիւն ունի»: (Անդ էջ 464):

Հետաքրքրական է գիտնալ որ 1619-ին մետաքսը Անգլիոյ մէջ կ'արժէր 24 աունանոց փառնտը 26 շիլինգ 10 բէնսի, այսինքն հասարակ փառնտը 17 շիլինգ 10 բէնսի: Այս մետաքսը ի Պարսկաստան կը գնէին Անգլիացիք 7 շիլինգի 6 բէնսի ակնկալելով որ պիտի ծախէին ի Լոնտոն 16 շիլինգի:

Սիր Թովմաս Ռօէի տրուած հրահանգներով Անգլիացիք կ'ուզէին որ ապահովութիւն ստանան Ծահէն թէ ան մետաքսին կէս փոխարժէքը Անգլիական ապրանք պիտի ստանար այն ալ Անգլիացիներուն ձեռնտու գիներով: Վեցերորդ յօդուածով կ'ուզէին որ մետաքսին գինը որոշ ըլլար եւ նաև բառնալէ առաջ ուրիշ տուրքեր չըլլային: Եթէ իրենց պայմանները ընդունուէին, անոնք կը խոստանային ըսելով՝ «մենք պիտի կարենանք տարեկան 8,000 հակ մետաքս առնել Պարսիկներէն, իւրաքանչիւր հակ Անգլիական 180 լիպրայ կամ ատոր մօտ հաշուելով»: (Անդ էջ 556)

մէջ իրենց առեւտուրը պիտի այլակերպէք եւ արգիլէք Հալէպի մէջ իրենց կերպասներուն վաճառումը, ինչպէս նաեւ յարակից միւս վայրերուն մէջ: Պէտք է գիտնաք որ 60 պաթման մետաքսը ջորիի մը բեռն է, եւ կը տեղեկացուի որ, Հայ գիւղ մը տարեկան 400 կամ 500 ջորիի բեռ մետաքս կը տանի Հալէպ եւ ետ կը բերէ 800 կամ 1,000 ջորիի բեռ բուրգէ կերպաս եւ վենետիկեան լաթեղէններ: 18 կտոր բրդեղէնը ջորիի մը բեռն է:» (1)

Ըստ իս հոս յիշուած հայ գիւղը, նոյնիսկ հայ առեւտրական կեդրոն հին Ջուղան է:

Վերի նամակին գրուելէն երկու տարի վերջ, 1568 Յուլիսին, նոյն նամակազիրը կը տեղեկագրէ: «Փոխան մեր ապրանքին Պարսկաստանէն ստացուելիք ապրանքը կը բազկանայ ամէն տեսակ գոյներով մետաքսներէ, թէ հում եւ թէ գործուած: Ամէն տեսակ համեմներէ, գեղերէ, մարգարիտներէ եւ թանկագին քարերէ (գոհարներէ), նաեւ տարբեր տեսակ գորգեր, տարբեր տեսակ ճոխ ապրանքներ: Պարսկաստանէն ամենավերջին մեկնողները ինծի ըսին թէ Պարսկաստանի մէկ քաղաքէն աւելի մեծ քանակութեամբ մետաքս կը բերուի, քան թէ Լոնտոն բերուած ամբողջ կերպասը: Նաեւ Հայաստանի մէկ գիւղը՝ Gilgat (Ջուղայ) անուանեալ, կը տանի 500 եւ երբեմն 1,000 ջորիի բեռ մետաքս թուրքիոյ Սիւրիական Հալէպ քաղաքը, որ չորս օրուան ճանապարհ է Տրիպոլիսէն, ուր վենետիկցիք շարունակաբար կը բնակին եւ անկէ կը դըրկեն մետաքսները որոնք կը տարածեն Գրիստոնեայ աշխարհի ամէն կողմը եւ կը փոխանակեն Անգլիական բուրգէ կերպասներուն հետ:» (2)

Ուրեմն, այլեւս տարակոյս չի մնար որ հայոց դերը հում մետաքսի արտածման եւ վենետիկեան եւ Անգլիական կերպասներուն ներածման մեծ եւ ընդարձակ առեւտուրին մէջ կենսական էր եւ նախանձելի: Նոյնիսկ կարելի է կասկածիլ որ անոնք միայն առեւտուրով

(1) Hakluyt's Voyages etc. Vol. II, pp. 44-45:

(2) Անդ p. 117: